

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առատութեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Գաղափարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Գաղափարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Բնորոշ է. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
մակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՄԱ. — ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սքազաղը.

ԲՆՈՐՈՇ Է

Հեռագիրները տեղեկութիւն չը տուին
այն ընտրող և հետաքրքիր ընդհարման
մասին, որ տեղի ունեցաւ Բերլինում, երբ
պրուսական թէլեգրամագրում ընկնում էր «Մի-
ջին-գերմանական» կոչված ջրանցքի ծրա-
գիրը: Պրուսական թէլեգրամագրում այդ ջրանց-
քի շինելու դէմ հանդէս եկան պահպանող-
ականները, չը նայելով այն հանգաման-
քին, որ ծրագրի նախաձեռնողը և հովա-
նաւորողը ինքը Վիլհելմ կայսրն էր: Պահ-
պանողական կուսակցութիւնը շատ սակաւ
դէպքերում է եղել կառավարութեան դէմ,
նա միշտ աշխատել է նրա հետ միասին
և միաձայն գործել և հասարակութեան
մէջ տարածել է այն համոզումը, թէ
թագի և կառավարութեան գլխաւոր յե-
նարանը և պաշտպանը պահպանողական
կուսակցութիւնն է:

Սակայն այս անգամ պահպանողական
կուսակցութիւնը և մանաւանդ կալուա-
ծատիրական այն խումբը, որ յայտնի է
ազգարի անունով, իրանց բոլոր կազմով
և ոյժով դէմ հանդիսացան ջրանցք շինե-
լու ծրագրին, այդ ձեռնարկութեան մէջ
տեսնելով իրանց շահերի համար վտանգ
և մի շարք անպատեհութիւններ: Զը-
րանցքը, որ կառավարութիւնը ծրագրել
է գերմանական առեւտրի զարգացման և
ուղղափառական նպատակներ համար,
հասնում էր զգաւ պահպանողական
կուսակցութեան կողմից, որովհետեւ ջը-
րանցք անցկացնելը կարող է ազդել ապ-
րանքների տեղափոխութեան և նրանց
գների վրա և ստեղծել անտեսական ան-
նպատակ պայմաններ Պրուսիայի կալուածա-
տիրական դասակարգի համար:

Երկրի ընդհանուր շահերը պահանջում
են, որ այդ ջրանցքը շինվի. գերմանական
հասարակութեան ընդհանուր կարծիքը

համակրում է ջրանցք շինելու գաղափա-
րին. իսկ պրուսական կալուածատէրերը ա-
մենախիստ կերպով դիմադրութիւն են
ցոյց տալիս և պարզամտութեամբ ձայների
բազմութեամբ մերժեցին այդ ծրագիրը,
որի մասին կայսրը ինքը իր ձառնիքի մե-
կի մէջ բարձրագոյն շեշտեց, որ նա ան-
պատճառ պէտք է իրագործվի: Անկա-
կած, պահպանողականների նեղ կերպով
ըմբռնած շահերը խանգարեցին մի հըս-
կայական նշանաւոր տեխնիկական ծրագրի
իրագործութեան, որը անշուշտ կընդունվի
հետեւեալ պարլամենտական նստաշրջան-
ներից մէկում: Բայց ներկայ դէպքում կա-
րեւոր է և մի ուրիշ հանգամանք, որ նը-
շանաւորութիւն ունի գերմանական պարլա-
մենտական կեանքի մէջ: Դա այն է, որ
պահպանողականները այս անգամ ամենա-
կտրական կերպով դէմ դուրս գալով կա-
ռավարական առաջարկին, որոշ կերպով
պնդում էին պատգամաւորական այն իրա-
ւունքների և պարտաւորութիւնների վը-
րա, որ դնում է նրանց վրա պրուսա-
կան սահմանադրութիւնը: Այդպիսով այն
սահմանադրութիւնը, որի դէմ յաճախ
խօսել էին պահպանողականները, պէտք
եկաւ նրանց, երբ խնդրը վերաբերում էր
նրանց մերձաւոր շահերին: Եւ պահպա-
նողականները, որ սովոր էին հակապատ-
կան անուն տալ պարլամենտական ուրիշ
խմբերին, երբ սրանց դէմ էին գնում կա-
ռավարութեան որ և է մի առաջարկի,
այսօր իրանք են վերցրել իրանց վրա բո-
լորովորդի դերը:

Այդպէս են ամեն տեղ պահպանողա-
կանները, այդպէս են և մեր փոքրիկ հա-
սարակութեան մէջ գործող պահպանողա-
կանները, որոնք արգելելով ուրիշների հա-
մար բոլորի և քննադատութեան ձայնը,
ամենայն հնարամտեամբ դիմում են նրան,
երբ որ և է կերպով վտանգ է սպառնում
իրանց շահերին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Քաղաքային ինքնավարութիւնը չնորմաւ է

վրա խաւարի թանձր քողը, որպէս զի երկինքը
չը տեսնէ, և այսպէս դարձեալ... և ո՞վ գիտէ,
դեռ մինչև երբ...

Այսօր առանձնապէս թանձր էր խաւարը
Հոգեմաշ ամայութեան վրա իշխում էր լռե-
լութիւնը, որ միշտ զարմանալի անցքերի
պատմութիւն գիտէ և յայտնի չէ, թէ ինչու և
ո՞ւմ համար է պահում. ժամանակի հետ համար-
ութեան դաշն են կուտ և զրոգում դէպի յաւի-
տեանականութիւն: Քանի ըստի անցքեր մեր եր-
կնքի տակ այսպէս անցել են գնացել: Հ... գիւ-
ղի վրա էլ այդ օրը ինչու լռութիւնը իր
հետ ունենալով ամայութիւնն ու խաւարը, և
սրանցից վեր, սև տարածութեան մէջ մեռելու-
թեան շունչն անտեսանելի կերպով խաղում էր
ցուրտ, սպանիչ խորհրդաւորութեամբ, և այս
բոլորը ամբողջ գործ էր, նրա ձեռքով կատար-
ված. երկինքն ու երկիրը խորաւ հանդիսատես-
ներ էին, ամապում էին...

Ամայութիւնը սարսափի մայրն է, որովհետեւ
մահվան շունչ է փչում ամայութիւնից. կենդա-
նին երբ չէ վախեցել մահից. գոնէ մի ձայն
հնչվէր, մի հատիկ ձայն. ինչու, ինչ արժէ մի
ձայնը լռութեան, այս սպանիչ խաւարի
մէջ. միթէ մի ձայնը կարող է լինել այս գա-
հուրդի դատարկութիւնը: Խուլ սարսափի ժա-
մին ո՞վ է ընկնում, ո՞վ է դատում. թող մի ձայն
լինի, դա կենդանութեան նշան է. ինչ փոքր լի-
նի, նա կարծես կը մեղմացնէ խաւարի մէջ իշ-
խող մեռելութեան ցուրտը, էլ սիրտ չի ճաքի,
էլ հոգի չի ցաւի, խաւար միջնորդն էլ այնպէս
չի խեղդել, այնքան ծանր չի լինի: Բայց ո՞վ պի-

տարող Անդրկովկասին և մօտ երեք տարի ա-
ռաջ մեր երկրի բոլոր քաղաքներում մտքովեց
քաղաքային կանոնադրութիւնը: Իբրեւ մի նոր
հիմնարկութիւն, որ կանչում էր քաղաքների
ազգայնականութիւնը սեփական միջոցներով հոգ
տանել իր բարեկեցութեան և լուսաւորութեան
մասին, քաղաքային ինքնավարութիւնը սկզբում,
ի հարկէ, թիւրիմացութիւններով դուռ պիտի
բանար, պիտի շատ թույլ գործադրութիւն զըտ-
ներ: Ինքնավարութիւնը հասարակական մի
բարդ պարտաւորութիւն է. դա մի փորձնաբար
է, որ ցոյց է տալիս, թէ մի քաղաքի ժողովուր-
դը որքան բարոյական ոյժ ունի իր անային
գործերը կարգադրելու համար, որքան կարողա-
նում է մեծաբեղ հասարակաց ընդհանուր շահե-
քը և կուլտուրական որպիսի ստեղծագործող
ոյժ է ներկայացնում: Այսքան նշանաւոր դեր
քաղաքային ինքնավարութիւնը միանգամայն, իս-
կայն և եթ, կատարել, ի հարկէ, չէր կարող:
Իւրաքանչիւր գործ կենդանութիւն է ստանում
երկար փորձերի միջոցով. իւրաքանչիւր ձեռ-
նարկութիւն պահանջում է պատրաստված մարդ-
կանց աշակցութիւնը, իսկ պատրաստվել կարե-
ւոր է աստիճանաբար, երբ ինքը, ձեռնարկու-
թիւնը, ցոյց կը տալ գործողների պակասութիւնը,
երբ գիտակցութիւն կը զարթնի և տեղական
հարցերը իրանց շուրջը կը հաւաքեն յայտնի
ծրագրերը, մտածողներ, կուսակցութիւններ:
Արկնում են, քաղաքային ինքնավարութիւնը
այն տեղերում, ուր նա մտքովեց առաջին ան-
գամ երեք տարի առաջ, ոչ հրաշքերի կարող էր
գործել, ոչ մի հաստատ գոյն ցոյց տալ, մանա-
ւանդ որ մեր դաւաճներում դեռ տիրում է
տգէտ աղանքի թագաւորութիւնը: Եւ ինչու
քաղաքային ինքնավարութիւնն էլ, հանդիմանե-
րների բերմունքով, պիտի ընկնէր այդ յետադէմ
անշարժ դասակարգի ձեռքը: Ամբողջ յոյսը կա-
րելի էր դնել ապագայի վրա, մանաւանդ այն
հանգամանքի վրա, թէ որպիսի գիտակցութեամբ
է վերաբերվում տեղական ազգայնականութիւնը
նոր հիմնարկութեան հոգուն, ինքնավարութեան
սկզբունքին: Այս կողմից մեր դաւաճական քա-
ղաքների մէջ կատարեալ յուսահատութիւն է
ներկայացնում Շուշին, մի տեղ, ուր այնքան
ճանաչած է խաւարամտութիւնը, յետադիմու-
թիւնը: Երևակայեցէ՛ք, դաւաճական այնպիսի
փոքրիկ անկիւններ, ինչպէս են Հին-Նախիջևա-
նը, Ախալքալաքը և այլն, ստացել են ինքնա-

վարութիւն կրճատված ձևով և շարունակում են
իրանց գործը, մինչդեռ Շուշին, որ ընդամեն
դպրոց էլ ունի իր պատերի մէջ, երեք տարեկա
ընթացքում ձանձրացել է ինքնավարութիւնից
և... արդէն ինչորեք է ներկայացրել մեր երկրի
բարձր կառավարութեան, որ վերացվել քաղա-
քային ինքնավարութիւնը և նորից հաստատվեն
հին, անդադական կարգերը: Զիչը է, այդ միջո-
ցին դիմել է քաղաքի մի մասը միայն, այն է
երկրորդ մասը, բայց դրանից իրողութիւնը, ի
հարկէ, չէ փոխվում: Շուշին բաժանված է եր-
կու ոստիկանական մասերի. առաջին մաս կոչ-
վում է հայերի թաղը, իսկ երկրորդը՝ թուրքերի
թաղն է: Արեւմտ ինքնավարութեան սպանող
հանդիսանում է Շուշու ամբողջ թուրք ազգա-
բնակութիւնը, որ հայերի ընդհանուր թւից շատ
չէ պակաս: Սպանութեան պատճառաբանու-
թիւնները պատմում է Բագուի «Բագուի» լրագրի
թղթակիցը, որ, ինչ կասկած, Շուշու երկրորդ
մասի բնակիչ է և—ո՞վ ժամանակներ—համակիր
է այդ սպանութեան: Թէև թղթակիցը մի կեղծ
քաղաքավարութեամբ (որ աւելի վատ է լինի
չը քաղաքական թշնամութիւնը) յիշում է միայն
քաղաքի առաջին և երկրորդ մասերը, առանց
ազգութիւնների անուն տալու, բայց եթէ ոստի-
կանական մասերի համաբնակչութիւնը մենք դնենք
այդ ազգութիւնները, որոնք ապրում են այդ
թաղերում, դուրս կը գալ, որ թուրքերը չեն
ուզում քաղաքային ինքնավարութիւն՝ հայերի
պատճառով:

Մեր քաղաքային ինքնավարութեան ան-
տարբեր և մասամբ կողմնաւոր վերաբերմուն-
քը դէպի իր գործը հասցրեց այն տեղին, որ
կովկասեան կառավարչապետին և Քանաւակի
հասնողապետին տուած ինչորեքների մէջ մեր
քաղաքի երկրորդ մասի բնակիչներ ինչորեք
են... horrible dictu!... վերացնել քաղաքա-
յին ինքնավարութիւնը, պատճառաբանելով,
թէ իր գործիքն սկզբից քաղաքային վար-
չութիւնը հոգ է տարել միայն առաջին մասի
բարեկեցութեան մասին ի վնաս երկրորդ
մասի:

Այսինքն թէ հայերը իրանց մասին են
միայն մտածում և թուրքերը զրկվածներ, հա-
րստավարվածներ են: Հիմա տեսնենք հայերի
չայնցանքները: 1) Քաղաքային վարչութիւնը
հարկ է վերցնում քաղաք բերվող անասուննե-
րից, սայլերից և ուրիշ բնույթից, իսկ սա վնա-
սում է քաղաքի առեւտրին, թանգացնում է հա-
ցը, անուրի, փայտը, մրգերը և այլն: Այստեղ

ուրի մի ճիշ էր այն, որ դուրս եկաւ Մէլքեց
գոմից, լայնատարած արձագանքներով կրկնելով
բնածաղիկի վրա և մեռաւ խաւար հեռաւոր
ութեան մէջ: Արկն լռութիւն, որ այս անգամ
էլ աւելի անաւոր դարձաւ, որովհետեւ այդ մի
ձայնին ուրիշները չը յաջորդեցին. միթէ այս
գիւղում մի աքաղաղ կայ միայն, մի հատ կեն-
դանի շունչ, այն էլ աքաղաղ... սարսափելի է:

Ողորմելի թաշուհին ինչն էլ վախեցաւ, ինչ-
պէս կարող էր վախեցաւ մի աքաղաղ: Նա մեծ
իշխողութիւն չուներ, բայց բնազդը նրան չարա-
դուլակ բաներ էր ասում. նա զգում էր, որ ե-
րէկ գիշեր այս ժամին իրեն այսպէս չէին ըն-
թառնում աշխարհում: Նա գիտէր, որ իրանից
անսկիզբապէս ինչոյ սովորաբար հարկանքից ա-
քաղաղը պիտի ձայնէր, մի բան, որ նրան սաս-
տիկ կատաղեցնում էր և այդ պատճառով նա
երկրորդ անգամ իր հակառակորդի ջիգրու էլ
աւելի ուժգին, էլ աւելի բարձր էր կանչում:
Բայց այսօր հակառակորդի ձայնը չը կար,
քաղաղն սպասում էր զարմացած: Ինչու թուրք
չարագուշակ էր: Այդ էլ երկար չը դադարեց
մտազոյն թշուհին, նա նայի իսկ անհոգ կեր-
պով, ախորժ տրամադրութեամբ փորձեց գուր-
գուրել իր ամենից սիրելի ամուսնուհին, այն սև
հաւին, որ միշտ աջ կողմին էր տեղ գնում
թաւի վրա և սէգ ամուսնու վաղորդեան առա-
ջին գուրգուրանքներ վայելում հպարտութեամբ:
Աքաղաղ մեկնեց իր աջ թևն ու կուտցը, բայց
այսչափ միայն, կողքը դառնալով էր, ընկնում
չը կար. նա վշտացած ու զայրացած դարձաւ:
դէպի ձախ կողմի ընկերուհին, դարձաւ դա-
տարկութիւն: Լուռ ու դառարկ էր նրա շուրջը,

Յ. ԺՈՄՁ.
եր, որոնք
անհրաժեշտ
արգելներ
հա-
մ են վե-
1—3

իւն րէա-
Старо
—10

Ն
սկ.

Նաթ
մինչև
ստում
պարզ
Արա-
մաճան-

գերա-
երկրի
7 (6)

առն

րէական

սիրտեով
4—15

է Բաթու
այսպէս
որականից
ընդունե-

ու համար
Ստեփա-
Մելիքի

արեկենդա-
Ստեփա-
Մելիքի
—20

27.

հայերը ոչինչ մեղք չունեն, քանի որ քաղաք մտնողները, հարկ տուողները միայն թուրքեր չեն և թանգուլներ, որ, որպէս թէ առաջա- նում է քաղաքային տուրքերից, հաւասարապէս գոյութիւն ունի թէ հայերի և թէ թուրքերի հա- մար: Առաջին փաստը երեխայութիւն է ցոյց տալիս. եթէ թուրք հայերը չեն հասկանում, գոնէ նրանց համար խնդրեցներ գործները, նը- րանց դատը պաշտպանող թղթակիցները և այդ թղթակիցները բերան հանդիսացող լրագիրը պի- տի իմացած լինեն, որ չը կայ քաղաք, ուր այդ- պիտի հարկեր գոյութիւն չունենան: Թող նայեն Բագուին, ուր ձայնաւորների մեծ մասը թուր- քեր են: Չ) Քաղաքային վարչութեան մէջ ծա- առյալում են զանազան հիմնարկութիւններից ար- ձակված, արատաւորված մարդիկ... Այս արդէն երկրորդ կարգի երեխայութիւն է: Հասարակա- կան հիմնարկութիւնը գտնվում է պատշաճաւոր իշխանութեան հակադրութեան տակ, այնտեղ ծա- առյալները շատերը հաստատվում են պաշտո- նի մէջ նախագահներ: Իշխանութեամբ. հետե- ւաբար, այդտեղ չեն կարող լինել գողեր և ա- ւաղակներ. իսկ մի տեղից արձակվելը դեռ չէ նշանակում, թէ արձակվածը չէ կարող մի ուրիշ տեղ մտնել ծառայելու: Յամենայն դէպս, դա մի այնպիսի զարմուտից դիտարկութիւն չէ, որ հարկաւոր լինի դրա համար ինքնավարութիւն վերացնել: Եւ քացի այս երկու պատճառներից, թղթակիցը ուրիշ բան չէ ցոյց տալիս: Այսքանն է եղել «Երկրորդ մասի» հակադրութիւնը ինք- նավարութեան մասին...

Բայց թողնենք երկրորդ մասը, տեսնենք նրա փաստաբան և համախոս թղթակցին: Բերանի կէտով նա ասում է, որ չէ կարելի չը դատա- պարտել այդ ինչիւրեքները, բայց իսկոյն շտա- պում է աւելացնել, որ երկրորդ մասի դրութիւ- նը, իսկ որ, անխախտանքի է: Բերում է իր «փաստերը»: Շնորհ արեք, բէալական դպրոցը, քաղաքային հիւանդանոցը, պատը այնքան հե- առ են թուրքերի թաղից, որ չէ կարելի ոտով հանել նրանց: Եւ մեղաւորը, ի հարկէ, քաղա- քային վարչութիւնն է: Թղթակիցը մի գոյնի ինքնարեւոյթութեամբ չէ իշխանակում, որ պա- տաստունը պատասխան վարչութեան ձեռքին է և քաղաքը ոչինչ իրաւունք չունի խառնվելու նրա կարգադրութիւններին մէջ: Գալով հիւանդանո- ցին և բէալական դպրոցին, ահա ինչ խոշոր փաստեր է կուլ տալիս թղթակիցը, չը վախե- նալով թէ իր տրամբի այդ կանոններից: Քաղա- քային հիւանդանոցը իր հաշուով կառուցել է մի շուշեցի հայ հարուստ, յատկացնելով նրա հա- մար իր սեփական տունը, իսկ պահպանութեան համար նուրբելով 100 հազար ռուբլի. իսկ բէա- լական դպրոցի նոր շինութիւնը կառուցանում է մի ուրիշ հարուստ հայ, որ տուել է դարձեալ 100 հազար ռուբլի: «Երկրորդ մասը» կարող է դժգոհ լինել, որ հայը հայի թաղում է հիմնում իր բարեգործութիւնը, որ, սակայն, ամբողջ քա- ղաքի համար է. բայց դա դատարկ դժգոհութիւն է, քանի որ ոչ ոք չէ արգելում, որ հարուստ հա- ջիններն էլ իրանց թաղում կառուցանեն հոյա- կապ հիւանդանոցներ, դպրոցներ: Քաղաքային վարչութիւնը այդտեղ ոչինչ չունի. նուրբողը

կայ, դնում է իր պայմանները, որոնք և ըն- դունվում են, ի հարկէ, իշխանութեան գիտու- թեամբ և համաձայնութեամբ: Ահա ձեզ բարե- խիղճ թղթակից, որ լատիններէն ասացածներն անգիր անելու աստիճանին հասել է, բայց ա- ռարկային իր սեփական անուն տալը մեղք է համարում «փոխթերախ» պատճառով... Երեւել «փոխթերախ» Այն ժամանակ, երբ Շուշում քա- ղաքային ինքնավարութեան հոտն անդամ չը կար, իւրաքանչիւր տանտէր հայ տրոտուար է չինում փողոցի վրա իր ծախսով, իսկ թուրք- բէզը բազմեց ուրիշ էր գտնում: Այժմ քաղաքային վարչութիւն կայ և նրան կողպելու համար նոյն որսասէթ թուրքը լաց է լինում, թէ հայոց թա- ղը տրոտուարներ ունի, կարծես թէ քաղաքային վարչութիւնն է չինել նրանց, կարծես թէ մէկը արգելում է, որ ամեն մի թուրք գոնէ այժմ իր տան առջև տրոտուար չինէ: Բայց թղթակիցնե- րին ինչ կարող ենք հասկացնել: Մեր խօսքը ուղ- դում ենք Բագուի լրագրին, որ ուղղում է աղա- ամախ իսլամի օրգան ձեռնալ և ասում ենք, որ նա մի շարք զրպարտութիւններ է տպել Շուշու հայերի մասին: Շուշու առաջին մասը գործով ցոյց է տուել, որ նա կանաչ դրօշակ չունի: Մի շուշեցի հայ առատ ջուր բերեց իր ծախքով և տուեց քաղաքի հասարակութեան՝ առանց խոտ- րութեան կրօնի և ազգութեան. միւսը հիւան- դանոց կառուցեց նոյն սկզբունքով, մի երրորդը բէալական դպրոցի համար մեծ տուն է շինում. նրա նուիրած 100 հազար ռուբլու եթէ ոչ կէսը, գոնէ մի երրորդը պարտաւոր էին տալ թուրքե- րը: Հիմա ասացէք թէ թուրքերը ինչ արեցին ընդհանուր օգուտ համար: Մենք չենք պարծե- նում հայերի արածով, ընդհակառակը, պէտք է աւելին պահանջենք նրանցից, քանի որ ում շատ է տուած, նրանից շատ էլ պիտի պահանջվի: Բայց մենք վրդովվում ենք այն ինտրիգներից, որոնց զոհ է դարձել թուրք ազգաբնակչութիւնը, բարձրացնելով մի այնպիսի անպատուաբեր հարց, որպիսին է քաղաքային ինքնավարու- թեան չինումը, այն էլ այնպիսի պատճառա- բանութիւններով, որոնք թուրքութիւնն և անհա- մաձայնութիւնն պիտի գցեն երկու հարեան աղ- զութիւնների մէջ, որոնք մինչև այժմ հաշտ ու համերաշխ էին ապրում: Այդ բաները հակադ- շելը լրագրի պարտքն է: Իսկ պէտք է ասելք տգէտ հայիներին, որ եթէ ինքնավարութիւնը նրանց ատել է, նա վաղը շատ հարկաւոր կը լինի նրանց որդիներին, երբ դրանք ուսում և կրթութիւն ստանալով, կաշխատեն պարտաճա- նաչ քաղաքացի լինել և հասարակական գոր- ծունկութեան ասպարէզ կորոնեն...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Բարձրագոյն հրամանով Բոստով քաղաքում հիմնվում է միջնակարգ արհեստագիտական դըպ- րոցը, որ պէտք է կազմի մեքենագործական և քի- միական գործակալ դպրոց: Պէտք է նախապատրաս- տութիւններ տեսնվեն, որ դպրոցը կարելի լինի բանալ առաջիկայ 1900 թվականի յուլիսի 1-ից:

Նրա դուռն բացվելու և փակվելու թրեկոցը հա- տում էր նոյն իսկ մինչև Մէլքեանց տունը, ա- ղաղան էլ էր լսում այդ թրեկոցը, որ նրա համար այնպիսի սովորական էր դարձել: Դրա- նից բնից յետոյ լսում էր գիւղական եկեղեցու կոչնակների ձայնը, որ մեղմ, թրթռուն հնչիւն- ներով առաւօտեան զով զեփիւտի թեկերի վրա տարածվում էր քնած գիւղի վրա, որպէս երկ- նային օրհնաբեր մեղեդի: Այդ ձայնից զարթ- նում էին ամենքը՝ աղջիկներն ու աշխա- տաւորները. ծիւր բերանները յօրանջելով աղօթե- րներ էին մղմլում, պառաւանները խաչակրում էին երեսները զանգակների ամեն մի զօղանջի- նի հետ և կիսախաւար փողոցների միջից, ինչ- պէս ուրուականներ, դիմում էին դէպի Աստու- ծոյ տունը: Տներին մէջ էլ կենք ու շարժում էր սկսվում:

Սակայն այսօր ոչ քահանայի դուռը թրեկաց, ոչ զանգակի ձայնը լսվեց: Ո՛ր էր քահանան, ինչպէս էր լուռ կոչնակը, ինչ էր պատահել, այդ էլ չը կարողացաւ հասկանալ առաջաղը, բայց կրկին երկրորդ ընտելը խօսեց նրա մէջ. այս- պէս չէր երէկ գիշեր: Այս անգամ նա սկսեց կանչել անընդհատ, իրար վրա: Այն ժամն էր, երբ հովիւը պիտի դուրս ընէր իր հօտը, նրա սրնդի մեղանաձօտ ձայնը մեղմիկ, լալկաւ ե- լենջերով սովորաբար նախ հնչվում էր գիւղին մօտիկ, ապա կամայ կամայ իր հօտի հետ միա- սին հեռանում էր դէպի դաշտերն ու լեռները: Նրան հետևում էին հօտալուսաբանների խրմ- բական երգերը, գութանների և սայլերի ձգնչը, անասունների բառաչը: Վիշբային հանգստից

Ներքին գործերի մինիստրութեան մէջ ըննը- վում է ներկայումս քաղաքների բնակարան- ների վրա հարկ դնելու ծրագիրը: Դիտարո- թիւն կայ այդ հարկը մտցնելուց յետոյ բնակա- րանների տներին իրաւունք տալ մասնակցելու քաղաքային ինքնավարութեան ընտրութիւննե- րին:

«Русскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ կառավարական շրջաններում այս տարվայ աշ- նան կը ընկնէ Կովկասի և Անդրկովկասի մի քանի բազմամարդ և մեծ գիւղերի և գիւղաքա- ղաքների խնդիրները: Վերոյիշեալ գիւղերը խնդրում են կրճատված քաղաքային ինքնավա- րութիւն մտցնել:

Վաղարշապատից գրած լուրի մէջ, որ տպվել էր «Մշակի» 147 համարում, հաղորդված էր, թէ Կ. Կոստանեանի իրեղէնները Էջմիածնի վանքը առել է 1000 ռուբլիով և գնահատում է եղել Սուքիաս արքեպիսկոպոսը: Այժմ մեկ խնդրում են յայտնել, որ Սուքիաս արքեպիսկո- պոսը դուրս է եկել Էջմիածնից յունիսի 20-ին, իսկ Կոստանեանի կարասիքի վաճառումը տեղի է ունեցել յուլիսի 18-ին: Գնահատման գործը կատարել է յատուկ պաշտօնական մարմինը՝ վանական կառավարութիւնը:—Ո՛վ է վերջապէս մեղաւորը:

Ծաղիկներ, թարմ մրգեր և բանջարանոցի արդիւնները ապահով և արագ կերպով տեղա- փոխելու նպատակով՝ երկաթուղային կենտրո- նական վարչութիւնը ուսումնասիրում է այդ գործի կազմակերպութեան խնդիրը: Դիտարո- թիւն կայ այդ առարկաներն ուղարկել մարդա- տար և միւս արագաշարժ գնացքների հետ:

Մեկ դիմում են բազմաթիւ նախաձեռնող զա- նազան անձինք, առաջարկելով իրանց ուսուցիչ Թէհրանի դպրոցի համար: Անհրաժեշտ ենք հա- մարում յայտնել, որ ուսուցիչ արդէն հրաւի- րված է, ուստի և նոր առաջարկութիւնները կը մնան առանց բաւարարութեան:

ՆՈՐ-ԲԱՍՏԱՆԻՑԻՑ մեկ գրում են հետևեալը. «Երկարատես երաշխութեան շնորհով հացի ար- տերը բոլորը միասին՝ մի քանի շաբաթով առաջ ուրիշ տարիներից՝ միանգամից դեղնել—հասու- նացել են: Թէ դարին և թէ ցորենը մի կողմից քաղվում են, միւս կողմից կալվում: Շատերը հէց չտալով հացահատիկները հազիւ հասց- նում են ջաղաց՝ ալիւր աղալու հաց թելելու հա- մար: Շատերն էլ իրարին փոխ են առնում՝ հաց թելում, որ մի քանի օրից յետոյ՝ տան: Աշխատանքը ուղարկների մօտ եռում է ամեն կողմից:—Աշխատում է գիւղացու թէ կիւր, թէ երեխան, ծառան, հովիւ և նոյն իսկ տան մե- ծը—ծերունին: Վերջինս բանն է սեղծը քա- մելը, ցորենը դարմանից գտել, ներս տանել տալ հացահատիկները, կալ մաքրել, դարմանը տեղաու- րել և միւս օրվայ «աշան» տեղը պատրաստել: Մի խօսքով տարվայ այս ժամանակին գիւղում, ինչպէս ասում են, քիչ է մնում գետնի մեռել:

յետոյ առաւօտեան կիսախաւարի մէջ գիւղն ամբողջ ասես ձգձգվում, յօրանջում էր ամենօ- րեայ աշխատանքը վերսկսելու համար: Աքաղաղն այսօր կանչվում էր և սպասում մէջ ընդ մէջ: Սրինգ չը կար, հովիւ չը կար, հօտ չը կար, հօտաղներն այսօր չէին երգում, գութանները չէին շարժվում, սայլերը չէին ձգնում, լուռ էր ամեն ինչ:

Աքաղաղն էլ լռեց իսպառ յուսահատված: Նա այժմ կուզէր ցած իջնել թառից, բայց վախե- նում էր, ուր իջնել այդ լուռութեան մէջ, այդ սարսափելի ամայութեան մէջ, չէ որ նա էլ կենդանի էր, կենք էր փնտրում: Օ՛, գոնէ չուտով լոյսը բացվէր, գոնէ մի բան տեսնէր խեղճ թռչունը. բայց այսօր լոյսն էր ծանր էր գալիս և խաւարը կարծես հեռանալու, չքանա- լու միտք չունէր: Վատաբաղը թռչնի ուղեղն էլ էր աշխատում, աքաղաղը մտածում էր երևի, ինչպէս որ կարող էր մտածել մի թռչուն, բայց հարցերը ծանր էին նրա ողորմելի ուղեղի համար: Նա չը գիտէր, թէ ինչ է պատահել գիւղին, ուր են իր ընկերներս, ինչպէս է ինքը մեռակ, ինչպէս չէ գուրս գալիս քահանան, ինչպէս է համարեցել կոչնակը, ուր է հովիւը, ուր է նրա հօտը, ով տարաւ, ով թախանք, հօտաղներն ինչպէս չեն բազում, ով նրանց պապանձները այդպէս ան- սիրտ կերպով, մի գուցէ քնած են ամենքը, այդ ինչ երկար քուն է այսօրվայ քունը: Ողորմելի թռչունը չէր յիշում իր աչքով տեսածները: Սարսափելի բան էր. ով էր կենդանի թողել այդ մի շունչը. ընդհանուր մեռելութեան մէջ ինչ պէտք էր այն Թօթի խեղճ թռչուն, տես,

ները հանեն և բանեցնեն: Չեն բանում կամ քիչ են աշխատում մի քանիսը միայն, այն է աչքը, զալված, տանուտէրը, քահանան: Սրանք մի արտօնված դասակարգ են իրանց շրջաններում, որոնք վաշելում են ուրիշի՝ իրանցից պաշտօնով և դիրքով փոքրերի աշխատանքի պտուղները: Չէ որ նրանք ամբոխի առաջնակարգ մար- դիքն են, հետևապէս և իրաւունք ունեն ապրել ուրիշի հաշուով, իրանց ստորագրեալ ժողովրդի աշխատանքով...»

ԾԱՂԿԱՁՈՐԻՑ մեկ գրում են. «Այս տար- վայ սաստիկ չորութեան պատճառով Ծաղ- կածորի շրջանի հացարդոյր մասածը փչացել —հիւանդացել է: Ցորենի ուղիղ կէսը մուր է դարձել, որ տեղական լեզուով «մրիկ» է կոչվում: Մրիկը համ սեւացնում է հացը, համ էլ պակսեց- նում է հացահատիկների թէ քանակութիւնը և թէ գինը: Շատ արտեր էլ իրանց սերմը հազիւ են արտադրում. դժուար է այն ընտանիքների դրութիւնը, որոնք դարձան պարտքով ամենա- թանգ գնեցով են առել սերմացուն և ցա- նելով արտը: 4—5 ամիս սպասել են, յոյս ունե- նալով, որ այսօր այդ ցանրից համ արտադրել պիտի տան, համ էլ իրանց տարվայ ուսեւտը տնտեսեն: Բայց որքան ցաւալի է, երբ սերմի քանակութիւնը միայն ստանալով հացի բերքից, զրկվում են արդիւնքի աւելորդ բաժնից, հե- տևապէս մնում են կրկին հացի կարօտ:»

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեկ գրում են. «Ասա- տիկ չորերից յետոյ երկու օր մեղմ անձրև եկաւ և դովաքրեց ընտրիւնը: Մեծ քանա- կութեամբ անձրև է եկել սարերում, իսկ Ա- րագածին և Արարատի վրա նստել է նոր ձիւն: Ջրերը բաւական վարարեցին և ծառաւած այրիները ու բաժակի արտերը կշտացան, բայց ինչ օգուտ, երբ ջրերու ժամանակը վաղուց ար- չէին անց էր կացել և արտերից ու այրիներից ղաթերը չորացել էին և փչացել: Մեծ պակասու- թիւն է գրացվում խոտի և դարմանի, ո- րոնք ընտանի կենդանիների միակ կերակուրն են համարվում ձմեռվայ ժամանակ: Գիւղացիների մեծ մասը, անկարող լինելով կերակրել իրանց ընտանի կենդանիները, ստիպված պէտք է լի- նեն ամենաէական գինով փաճառել: Խոտի 100 խորձը, որ նախկին տարինեւում վաճառվում էր 1 ռ. 40—50 կ, այժմ արժէ 4—5 ռ., իսկ դարմանի խալվարը, որ արժէր 1 ռ.—1 ռ. 40 կ, այժմ վաճառվում է 4 ռ. և աւելի:»

ԾԱՂԿԱՁՈՐԻՑ մեկ գրում են. «Ամբողջ ա- մառը երաշտ լինելուց յետոյ, յուլիսի 27/28-ին սաստիկ անձրևներ տեղացին, որոնք ոչ միայն ոչինչ չօգնեցին հացարդոյներին, այլ և տեղ- տեղ հեղեղներ գոյացնելով՝ փչացրին հացի բազմաթիւ արտեր: Այդ անձրևները անմիջա- պէս յետոյ, յուլիսի 29-ին, տեղաց նոր կարկուտ և փչացրեց Բանդալ գիւղի ցանքերի մի մասը: Վնասը պաշտօնապէս որոշված է 10,000 ռուբլի: Այդպիսի վնասներ աւելի մեծ են լինելու, որով- հետև այս տարի մի գնեսաւոր տեղ բռնող ցորենի արտը, որ կարող է 10 տալ հացարդոյ

ձայնը մինչև երկինք կը հասնի... Եւ քաղաքը կանչում էր ու կանչում. ում պիտի դարձնեցէր, շրջապատի ըուրը ծանր էր, յաւիտեական և նրա ձայնն անդոր, թոյլ. բայց նա կանչում էր իր թառի բարձրութիւնից բուռն թափով, կան- չում էր ուժգին քանի կարող էր, գոնէ այդպէս էր թոււմ նրան. և իրօք թոււմ էր միայն, որովհետև նրա ձայնն այժմ կոկորդից դուրս էր գալիս մի տեսակ ողբազին, նուազած, լալազին Նա էլ թեկերը չէր թափահարում, էլ հպարտ չէր իր հնչուն ձայնով, միայնութիւնը և լուռ- թիւնը խորտակեց նրան, նա կանչում էր և կծկվում, գլուխը քաշ գցում, ասես թէ խոր- հոտ էր, տխուր էր:

Մէկ էլ յանկարծ մի ոտնաձայն լսվեց գո- մում. վերջապէս նա էլ մեռակ չէր. մէկը ներս մտաւ. քաղաղն ոյժ առաւ, քաշվեց, այս անգամ վերջապէս նա թափ տուեց թեկերը և իսկապէս կանչեց իր լաւ օրերի պէս, կանչեց և ցած թռաւ թռալով: Երկու աչքեր էին փայլում գոմի կիսախաւարի մէջ, պաղ, պսպղուն, սառ- սափելի աչքեր: Աքաղաղը անաւաւ. հասկացան արդեօք, թէ ինչ էին ասում այդ աչքերը. գու- ցէ, որովհետև նա նորից փորձ փորձեց թռալ- բարձրանալ, սակայն իզուր, երկու աչքերը մօ- տեցան, տաք շունչը փչեց թռչնի վրա, նա հա- զիւ կարողացաւ վերջին անգամ մի տխուր ճիւ արձակել գայլի բերանում:

Վերջապէս, Հ... գիւղում էլ ոչինչ չը կար էլ ոչ ոք չը կար...

Ա. Ահարոնեանց

Պ է գ ու

արտադրել, անշուշտ եկամուտ կը տար տիրոջը մօտ 300 ր., քանի որ թէ հացահատիկը և թէ յարկը իրանց եռապատիկ գինն ունեն: Բայց կարկուտը քանի քանի արտեր չարդեց, գոնեով իր վարարգոյթեան առաջարկներն արդիւնաբերութիւնը ծանկալի է, որ սրանից յետոյ զիւղացու աշխատանքի հալալ պտուղները ապահովագրվելն այդպիսի բնական աղէտներէ դէմ, որովհետեւ նրա ամբողջ տարվայ պաշարը, նրա գոծիսային աշխատութեան արդիւնքը՝ նոյն իսկ իր հասունեցած վերջին օրերին, րօպէսպէս կուլ է գնում մի կտոր կարկտի ամպի հաճոյքին... Կարծում ենք «Մշակի» ձայնը, այդ դէպքում, իր բարեբար հետեանքը կունենայ, ինչպէս նաև ուրիշ հանրաշահ գործերու մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, օգոստոսի 8-ին

Նորբերս, ինչպէս յայտնի է, Պարսկուստ ժամանակեց պարսից արտաքին գործերի մինիստր Միրզա Մօհսու խան Մուշիր Դօվլան: Այդ մասը խոշոր փոփոխութիւններ առաջ բերեց պարսից մինիստրական մարմինը մէջ և ամբողջ 5-ին, Մուշիրֆէրէզդին Շահի ֆիրմանով, հետեանալ պաշտօնեաները մինիստրական կոչում և պաշտօն ստացան: Արտաքին գործերի մինիստր նշանակվեց Միրզա Նասրուլլա խան, քառ տարեկան Մուշիր-Մուշիր, և վերակալվեց Մուշիր-Մուշիր, այսինքն ժառանգեց նախորդեալ արտաքին գործերի մինիստրի տիրոջը: Ներքին գործերի մինիստր նշանակվեց Դաւր-Մուշիր, արդարադատութեան և վաճառականութեան մինիստր կամ վեզիր նշանակվեց Ամին-Մուշիր, պետական կալուածները մինիստր նշանակվեց—Աւրֆ-Մուշիր, ստանալով մի և նոյն ժամանակ Թէհրանի քաղաքապետի պաշտօնը, իսկ պետական խորհրդի կամ, ինչպէս պարսկերէն են անուանում, Դաւր-Մուշիր վեզիր անուանվեց Նազր-Մուշիր, Պետերբուրգի նախկին դեսպանը: Պարսկադատական մինիստրի պաշտօնը յանձնվեց արտաքին գործերի նոր մինիստրին, Մուշիր-Դօվլանին, որն առաջ և վարում էր այդ պաշտօնը, ինչպէս և ֆինանսները մինիստրի պաշտօնը: Բացի այդ նոր փոփոխութիւնները, Շահի ֆիրմանով վերանշանակվեց մեծ սպանաւարի (սփա-սպանաւար մագլէմ) պաշտօնը, որ թափուր էր մնացել 1880 թվից ի վեր, վերջին պարսիկ սպանաւար Միրզա Հուսէյն խանի մահով: Սպանաւարութիւնը, ինչպէս յայտնի է, Պարսկաստանի ամենահին պաշտօններից միւն է: Նոր սպանաւար նշանակվեց Ամիր խան Սար-դարը, որ պարսից գործի ընդհանուր հրամանատարն է:

Արտաքին գործերի նախկին մինիստր հանգուցեալ Մուշիր-Դօվլան, Հալի Միրզա Մօհսու խան անունով, նշանաւոր և յայտնի անձնաւորութիւն էր և բաւական մեծ դեր է խաղացել իր երկրի պատմութեան մէջ: Մօտ 20 տարի նա ղեկավար էր Կ. Պոլսում, ուր մի և նոյն ժամանակ ղեկավարական մարմին աւանդ էր համարվում: Նա հիմնովին ծանօթ էր ֆրանսիական լեզուին և յայտնի էր իբրև նորը քաղաքագէտ, և եւրօպական շատ պետական անձինք ու դիւանագէտներ բարեկամական յարաբերութիւններ ունէին նրա հետ: Նա շատ սիրելի էր սուլթան Աբդուլ Համիդին և համարվում էր նրա անձնական ժողովրդական բարեկամ: Լինելով Միրզա Մեղքուն խանի կուսակից, նա վերջինիս հետ միասին պաշտօնեանի եղաւ Կ. Պոլսի դեսպանութիւնից հանգուցեալ Նասրէզդին Շահի հրամանով և վախճանելով Շահի բարկութիւնից, մեքսիկ Թէհրան գալ և առժամանակ անպաշտօն մնաց Կ. Պոլսում: Համարվելով սակայն, որ Նասրէզդին Շահը ներքին է իրան, նա եկաւ Թէհրան 1890 թվին և ստացաւ արդարադատութեան և վաճառականութեան մինիստրի պաշտօնը ու «Մուշիր» Դօվլան տիրոջը: Մի քանի տարուց յետոյ, երբ վախճանվեց արտաքին գործերի ծեծուծի մինիստր Գալամ-Դօվլան, այդ պաշտօնը յանձնվեց նրան և, պէտք է ասել, իբրև հմուտ քաղաքագէտ, նա կարողացաւ մեծ համարում և հեղինակութիւն ձեռք բերել իրավաստիայի մէջ, ստեղծելով անկախ պարսկական քաղաքականութիւն, որքան այդ թիւղ էին տալիս Պարսկաստանի պաշտանները:

Սկզբում մեծ երկիւղ կար, որ Մուշիր-Դօվլան, իբրև սուլթան Աբդուլ Համիդի անձնական բարեկամ, կը յարէր թիւրքաց վարման սուլթանին քաղաքականութեան և կաշխատելու իրազդրել նրա յղացած համարժեքական գաղափարը, հաստատելով Թիւրքիայի և Իրանի մէջ կոնսական դաշնակցութիւն, այն է իսլամի դաշ-

նակցութիւն ընդդէմ քրիստոնէութեան: Ինքն կարմիր սուլթանը մեծ ուրախութիւն յայտնեց, իմանալով որ իր սիրելի Մուշիր Դօվլան նշանակվել է արտաքին գործերի մինիստր, ուստի և շտապեց ուղարկել Մուշիրֆէրէզին իբրև դեսպան, յանձնարարելով նրան գլուխ բերել համալսական դաշնակցութեան ծրագիրը: Հայկական կոտորածները նոր էին վերջացել: Մուշիրֆէրէզ սկսեց ղեկուցադրել ներկայացնել Շահին և Սարդարաբադին, արդարացնելով այդ կոտորածները, համարելով Շահին, որ հայերը, իբրև յեղափոխական տարր, մեծ վտանգ են ներկայացնում, որ նրանք Պարսկաստանում ևս յեղափոխական դիտումներ ունեն, ուստի և պէտք է հայածել, պատժել նրանց, ինչպէս Թիւրքիայում:

Սակայն որքան եղաւ կարմիր սուլթանի և նրա արժանաւոր ներկայացուցչի զարմանքը, երբ տեսան, որ Մուշիր Դօվլան ոչ միայն չէ ալակցում իրանց, այլ և դիմադրութիւն է ցուց տալիս: Մուշիր-Դօվլան, որը, ինչպէս ասացինք, նորը քաղաքագէտ և խելք անձն էր, շատ շուտով կարողացել էր ըմբռնել, որ դաշնակցութիւնը Թիւրքիայի և Պարսկաստանի մէջ միայն վնաս կարող է բերել վերջինին, իսկ հայերի մասին յերկրած գրադարութիւնները ոչ մի հիմք չունեն, նա ինքն չէր տեսնում կարողացաւ համոզվել, որ Նասրէզդին Շահին և Սարդարաբադին ընդհանուր քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ միանգամայն արդարացի է, որովհետեւ հայերը Պարսկաստանում ներկայացնում են կոտորուական տարր, մեծ ծառայութիւններ են մատուցել Շահին դաշին և ոչ մի վտանգ չեն կարող ներկայացնել Պարսկաստանի համար: Քննութեամբ ապացուցանելով հայերի անմեղութիւնը և Մուշիրֆէրէզի գրադարութիւնները, Սարդարաբադը և Մուշիր-Դօվլան պահանջեցին սուլթանից Մուշիրֆէրէզի յետադիմում և սուլթանը ստիպվեց զիջանել ու հայերը աղաւթվեցին այդ չար հայածողից և գրադարողից: Այնուհետև Մուշիր-Դօվլան ամեն մի յարմար առիթով արտայայտում էր իր համակրութիւնը հայերին, հովանաւորութիւն ու պաշտպանութիւն էր ցուց տալիս նրանց դպրոցներին ու գործերին: Նրա օրով հայ պաշտօնեաներից միւնը—Յովհաննէս խան Մասեհեան, կարևոր դրք և պաշտօն ստացաւ արտաքին գործերի մինիստրութեան մէջ և այդ ապագայից է, որ նա իւր տրուութիւն չէր դնում ազգութեան ու կրօնի մէջ: Նոր մինիստրը, որ առաջ յայտնի էր Մուշիր-Մուշիր տիրոջնով և վարում էր օգնականի պաշտօնը, արտաքին գործերի մինիստրութեան հետ ստացաւ և հանգուցեալ տիրոջը—Մուշիր Դօվլան: Նա եւրօպական կրթութիւն չունի, ծանօթ չէ ոչ մի եւրօպական լեզուի հետ, բայց յայտնի է իբրև փորձառու, ճշգրտաբան և վերին աստիճանի աշխատասէր մարդ: Նա առաջացել է հասարակ միջոցայի կամ գրագրի պաշտօնից, գիտէ եւրօպական կրթութեան յարգը, որովհետեւ, հակառակ տիրապետող բուսինայի, իր գաւազաններն ուղարկել է Եւրօպա և նրանց տուել եւրօպական կրթութիւն: Նրա անդամակն ոգը ղին, Հասան-Ալի խան անունով, աւարտել է Մոսկվայում իր ուսումը համալսարանի իրաւագիտական ֆակուլտետում և առաջին պարսիկ երիտասարդն է համարվում, որ ստացել է սիւստենտական և ուսական կրթութիւն: Հօր հետ միասին Շահի ֆիրմանով նա նշանակվեց արտաքին գործերի մինիստրի օգնական, ժառանգելով մի և նոյն ժամանակ հօր տիրոջը—Մուշիր-Մուշիր: Ծանկալի է, որ երկրորդ տարեկան կարողացել իր համալսարանական ուսումն շահաւէտ կացուցանել իր հայրենիքի համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐ

«Times» լրագրի Բերլինի թղթակիցը ասում է, թէ շատ հաւանական է, որ Բաղդադի երկաթուղու կառուցանելու հարցում՝ սուլթանը իր համաձայնութիւնը տալ իշխանի տեղերի անդլական ծրագրին, ի նկատի առնելով միմիայն քաղաքական շահերը, չը նայած այն բանին, թէ այդ գիծը ինչ ուղղութիւն կունենայ, կամ որքան շահաւէտ կը լինի ֆինանսական տեսակէտից: Սուլթանը չէր այժմանից, որպէս թէ, աշխատում է նորից բարեկամական յարաբերութիւններ հաստատել Անգլիայի հետ: Վերջապէս սուլթանը, որ միշտ աշխատում է զանազան պետութիւնների շահերի ընդհարման առաջն առնել և հաստատարկութիւն պահպանել չի ցանկանալ, որ Ասիական Թիւրքիայի կառուցանելը երկաթուղիների բոլոր ցանցը անցնի մէկ ընկերութեան ձեռքը:

«Tribuna» լրագիրը խորհուրդ է տալիս իտալական կառավարութեան ներկայացնել իշխանի տեղերի դատարանին այն չորս ղոկումներները, որոնք յիշված են բարդութիւն մէջ և որոնք վրա յիշվում են Իրէֆֆուսի մեղադրողները:

Եթէ Իտալիան չէ ցանկանում մասնակցել իրաւաբանական մասկան մէջ, —ասում է լրագիրը, —նա այլ ևս չը պէտք է ուղարկէ: Այդ չորս ղոկումներներից մէկի մէջ պարունակվում են մի քանի նկատողութիւններ Մադակասկարի մասին, որը, գործին մօտիկ ծանօթ մի անձի խօսքով, սկզբից մինչև վերջը գրված է «բալ ուրանի» ձեւով: «Corriere della Sera» լրագիրը հաղորդում է, թէ միւս նկատողութիւնների հեղինակը՝ մի ոմն Իւրաուա է: Պանդարդի յայտնել է, թէ Իւրաուա այդ անձի իսկական անունը չէ, այլ նրա կեղծ անունը: Ծանկանալի է, որ այդ լրագիրը վաղուց է յայտնի ֆրանսիական կառավարութեան:

«НОВОСТИ» լրագրին հեռագրում են, թէ Լօնդօնում Էստէրհադին ծանալել է ամբողջ և սաստիկ ձեռքը: Ուստիկանութիւնը ստիպված է եղել միջամտել, իսկ ամբողջի ձեռքից և տանել Էստէրհադին կառքով:

«Figaro» լրագրում տպված է Պարիզի իտալական նախկին դեսպան Բեռնարդի նամակը, որը նա գրել է արտաքին գործերի մինիստր Վիտտորիօ-Վէնետտին: «Սի հիւանդ եմ, ես դժուր եմ, որ պէտք է մեռնեմ: Բայց մեռնելուց առաջ ես կը ցանկանայի միայն տեսնել խեղճ Իրէֆֆուսի անմեղութիւնը հաստատված»:

ՄՇԱԿԻՒ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐ

18 օգոստոսի

Իենն: Նիստը բացվեց 6 ժամ 40 րոպէին: Կանչում են ինստիտուտի անդամ Պոլ Մէլերին: Նա յիշեցնում է այն խոզաբոկութիւնները մասին, որոնց հիման վրա ինքն եկաւ այն եզրակացութեան, թէ բարդութիւն գրված է Էստէրհադին հաղորդ:

Ecol des chartes ուսումնարանի պրօֆէսոր Մօլինէի հաստատում է Մէլերի եզրակացութիւնները: Այդ ուսումնարանի մի ուրիշ պրօֆէսոր՝ Միրի, յայտնում է, թէ բարդութիւն ձեռքը նման է Էստէրհադին ձեռքին ու միայն շատ քիչ նմանութիւն ունի Իրէֆֆուսի ձեռքին: Վկան մատնացող արեց Էստէրհադին ու Իրէֆֆուսի ձեռքերի նմանութեան վրա, որով և բացատրվում է այն հանգամանքը, որ բարդութիւն Իրէֆֆուսին կարելի էր վերադրել: Բայց երկու ձեռքերի ճիշնութիւնը ցոյց է աւելի, որ նրանց մէջ տարբերութեան բաղաձիւ նշաններ կան:

Ինստիտուտի անդամ Պիլօ առաջ է բերում աստիճանաբար կցորդել հետ Իեննիկ տարվայ մայիս ամսին ունեցած իր խօսակցութիւնը: Կցորդը զարմանք էր յայտնում օֆիցերների աւօթայի ընթացքի մասին և ապացուցանում էր Իրէֆֆուսի անմեղութիւնը: Նա մեղադրում էր Էստէրհադին, որը—ասում էր նա—ծառայում էր մի գործակալին, որին և առաջարկեց բարդութիւն: Բարդութիւն միայն երեք ղոկումներները իսկական էին, իսկ երկուրդը և չորսրդը մտքոված էին տեղը լրացնելու համար: Ի պատասխան բարդութիւն գործակալը գրեց մի հեռագիր, որ նրանից յետոյ յայտնի դարձաւ. «petit bleu» անունով, բայց յետոյ միտքը փոխելով, գրեց հեռագիրը կրակի մէջ: Բո՛՛՛՛ կտրակաւապէս բողբոջում է Պիլօն այն խօսքերի դէմ, որ վերաբերում է օտարերկրեայ կցորդի զարմանք յայտնելուն: Ֆրանսիական օֆիցերների ընթացքի մասին—«Սի ինչ կարելի է մտածել,—բացականչում է նա,—օտարերկրեայ մի օֆիցերի մասին, որը սպանական հերքում ուղարկեց «Figaro» լրագրին դիմելով Մերսիէի դէմ և ապա ստիպված էր իրան համարել հեղինակ այն նամակին, որից նա առաջ հրաժարվում էր: Բո՛՛՛՛ նկատում է, թէ այն խօսակցութիւնը, որի մասին խօսում է Պիլօ, տեղի է ունեցել այն ժամանակ, երբ վաճառեկ դատարանի ընտելութիւնը ամենքին յայտնի էր դարձել: Գնեալ Իէլուա բացատրութիւններ է տալիս արտիքական նիւթերի առանձնաշատկութիւնների մասին: Նրա ասելով, անհարմար է, որ հետեան զօրքը որ և է մի օֆիցեր կարողանալ 189 (?) թվին տեղեկութիւններ հաղորդել Ք 120 court տորմադի մասին: Այն ժամանակ ղեւ գրդուին չունէին Ք 120 court-ի մասին կանօններ: Բորէնեան գործիք գաղտնիք յայտնի դարձաւ միմիայն 1896 թվին: Իլլուստր չտալի օֆիցերները, —կարծում է վկան,—կարող էին ձեռք բերել հրացանաձգութեան ձեռնարկը: Վկային առաջարկվեցին էլ ի մի քանի տեղերի վրայից հարցեր: Իրէֆֆուս պատասխանում է Իէլուայի ցուցմունքներին, թէ Ք 120 court տորմադի մասին նա իմացաւ միայն այն դատարանութիւններից, որ կարողացել էին Բուր-ժու 1890 թվին, դիմելով Մերսիէի ներկայութեամբ, և տեսնել է Ք 120 court-ի երկու անգամ միմիայն: Իսկ այդ գործիքը արձակելը բողբոջին չէ տեսնել, և զիլուստր չտալում իր եղած երկու ամսվայ ընթացքում չէ մասնակցել, երբ այդ

գործիքը բանեցնում էին: Դատարանը որոշում է վաղվայ նիստը դադիակ անել, որի ժամանակ կը ըննվեն այն ղոկումներները, որոնց պահանջը է պաշտպանը և ժողովը է երրորդ արտիքական բաժանմունքը: Իէլուա ներկայացրեց ղոկումներները: Մայր Դարտման և Իրիկոկ ներկայ կը լինեն: Նիստը փակվեց 11 ժամ 15 րոպէին: Ամենայն գրվեցին առանց միջնադէպերի:

ՊԱՐԻՉ: Սպանական նախկին դիւտապան կցորդ մարկիզ Վալիարդուս մտադիր է «Figaro» լրագրի դէմ դատ սկսել այն յօդուածների աւթիւթով, որոնց մէջ իր անունը կապվում է Իրէֆֆուսի գործի հետ:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ: Մեծ Իլլան Սէքսուսը Միլալովիչ ժամանեց այստեղ «Адмиралъ Анрак-ОНЪ» զբաւակիր նաւով: Նորին Բարձրութիւնը այցելեց այստեղի պալատը, որտեղ գտնվում է իր Ամուսինը, Մեծ Իլլանուհի Կսէնիա Սէքսուսի օգոյթիւս իր օրգկերանցով:

ՊԱՐԻՉ: Տավերնիէ երկվ մէկ ամբողջ ժամ հարց ու փորձի ենթակեց զիւ-Պատիդը-Վլա-մին: «Matin» լրագրին ասում է, որ զիւ-Պատիի ցուցմունքներում ապացնող մեղադրութիւններ են պարունակվում: Այդ մեղադրութիւններից մէկը այնքան նշանաւոր է, որ լրագիրը Բէնին դատարանին է լծողում նրա հրատարակումը: Տավերնիէ այսօր կրկին հարց ու փորձի կենթարկէ զիւ-Պատիին:

Իէրուզէլ գիմեց Լուբին մի նամակով, որի մէջ բողբոջում է այն բանի դէմ, որ առաջիկայում բարձրագոյն դատարանը կանչելու է իրան, որպէս յանցաւորի միապետական դատարանութեան մէջ, այն ինչ ինքն չէ դադարել պլեբիսցիտային հոսիապետութեան կողմնակից լինելուց: Իէրուզէլ իր դատապարտութիւնը անկասկած է համարում, բայց պահանջում է, որ անյապաղ դատ սկսվի:

19 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Հակաժամանադարային յանձնաժողովից յայտարարվում է, որ Ինկուս նաւահանգիստը, Մանլուբիայում, ժամատախտի կողմէ պահպանվում է ճանաչված:

ՊԱՐԻՉ: Ս. Յուլիէի եկեղեցին կողոպտելու մէջ մեղադրվողները երես առ երես կը կանգնեցնվեն վկաների հետ: Այն մեղադրվողները, որոնց յանցաւորութիւնը կատարեալ ճշդութեամբ ապացուցված չի լինի, պատուութիւն կը ստանան: Դատարանութեան գործին վերաբերալ խոզաբոկութիւնները շարունակվում են: Լուբեր են պտտում, թէ առաջիկայում կը կալանաւորվի մի շատ նշանաւոր ժողովրդական:

Եսթրոլ փողոցում ամեն ինչ առաջվայ նման է: Իէրէն, ջրի պակասութիւնը զգալով, այսօր անձրևի ժամանակ տաշտ դուրս բերեց և զրեց անձրևի տակ ու այդպիսով հաւաքեց ջրի մի փոքր քանակութիւն:

Չինուրական գործակալ Տավերնիէ հարց ու փորձի ենթակեց այսօր զիւ-Պատիդը-Վլա-մին և կը շարունակի հարց ու փորձի հիշողաբի օրը: Կ. ՊՈԼԻՍ: Չերնօգորեան իշխանը և իշխանուհին այսօր զիշեր ժամանեցին Դարբանէլ, որոնց դիմաւորեցին սուլթանի կողմից ուղարկված անձինքը:

Կ. ՊՈԼԻՍ: Իշխանը իշխանուհու հետ կը ժամանեն վաղը առաւօտեան, որոնց կը դիմաւորեն Թուրքիան-փաշան, արտաքին գործերի մինիստր Թիւֆիկ-փաշան և ուրիշ բարձրաստիճան անձինքը: Սուլթանի մօտ ընդունելութիւն ունենալուց յետոյ իշխանական զոյգը կը մեկնի Էմիրիէ պալատը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

17 օգոստոսի

Մուշակների ընթացքը	
Երեք ամսով Լօնդօնի վրա 10 ֆունտ	93.90
Իեննի վրա 100 մարկ	45.76 1/2
Պարիզի վրա 100 ֆրանկ	37.22 1/2
Լօնդօնի վրա 10 ֆունտ	94.80
Բերլինի վրա 100 մարկ	46.80
Պարիզի վրա 100 ֆրանկ	37.52 1/2
Բորսայի դիվիդենդ	6-7 1/2
4% պետական ընտա	100 1/2
4% պետ. կալ. ընտելի գրաւ. թղթ.	98 1/2
4 1/2% իտալ. դիւլ. հող. բանկի	98 1/2
5% վիճակ. տոմս. առաջին ներքին փոխ.	296 1/2
5% " " երկրորդ	256
5% " " զբաւ. թղթ. պետ. կալ. բանկի	206 1/2
5% ընտել. ընտա	100 1/2
5% զբաւ. թղթ. փոխ. հող. վարկի ընդ.	100 1/2
4 1/2% ներքին երկաթուղ. փոխ. 1890	100 1/2
5% " " 1892	100 1/2
5% Թիւֆիկի վարկի ընդ.	100
4 1/2% Թիւֆիկի կալուած. բանկի	99
6% Բուլգարիայի կալուած. բանկի	99
Անգլիաներ Իուս. առեւտր. արդիւն. ընդ.	272 1/2
Եղ. Նոթելի նաւթ. ընդ.	642
Կասսիական ընդ.	610
Բազուլի նաւթ. ընդ.	780

Իմբադիր՝ ԱԼԷՔՍԱՆԴԻՐ ԲԱՆԻՔԻՐ
Հրատարակչին՝ ԹԱԳՈՐՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔԱՆԱՍԱՐԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՈՐ ՀԻՄՆԱԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆԻ

(Կուլիսա, Վարդանգի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆԻ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, վնասերական (սիֆիլիս) և միզապնակ. հ.
Կ. Մ. ԶԻՆՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆԻ—11—12 ժ. կանանց
հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—12—1 ժ. ականջի, կո-
կորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ—1—1/2 ժ. ներքին և
երկարաց հ.

Ա. Գ. ԳՈՐԻՎՈ—1/2—2 ժ. ներքին և միա-
սեռական հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—6 1/2—7 1/2 ժ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆԻ—7 1/2—8 ժ.

Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ Հիւանդանոցում քիմիական
և խոշորացուցական հետազոտութիւններ և ա-
նու մէջի, խիւի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի
(կոմիտէի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—պարապում է տանը
ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամար-
դութեամբ և մարզելով, դիմել 11—1 ժ:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

10—150 Բժշկական ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆԻ

ԵՐԱՆՈՒՅԻ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՆԵՐ

(ԺՆՆԻ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ)

ՄԱՍՆԱԴՈՐ ԳՊՐՈՑՈՒՄ աշակերտների և աշա-
կերտահանների ընդունելութիւնը սկսվում է օ-
գոստոսի 20-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից:

Երևանից պատրաստվում են գիմնազիանե-
րի, բնական և այլ միջնակարգ դպրոցների
համար:

ԵՂԱՐՔԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ, ԳԵՈՐԳ և ՍԱՐԳԻՍ
ԲԱՎՂԱՍԱՐԵԱՆՆԵՐԸ պատիւ ունեն ծանու-
ցանքով ընդհանրութեան, որ սոյն օգոստոս
ամսից Թիֆլիսում, Սիօնի փողոցի վրա, ՅՈՎ-

նանովի բարձրագույն արտադրում բացել են
ամեն տեսակ մանուֆակտուրային ապրանքների
գումարածախի վաճառատուն (ՕՊՏՈՎՅԻ ՏԵՂԱՐՔԻ):

(Հ. Ո.) 2—5

Ռաշտի Ազգային դպրոցի համար
հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑԻՉ ռուսաց
լեզուի (միւս առարկաները կարելի է
բաժանել ներկայ ուսուցչի հետ համա-
ձայնութեան դայով) համար: Ցանկացող-
ները կարող են դիմել հետեւեալ հասցէով՝
Քեմտ (Персия) черезъ Баку—Энзели,
Г-ру Агаведи Осепяну. 3—5

ՄԻ ԵՐԻՏԵԱՆԻ

որոնում է հաշվապահի օգնականի կամ գրագրի
պաշտոն: Ցանկացողները թող դիմեն՝ Վշապ
լրագրի խմբագրատունը: 5—5

ԲՈՒՅԿ Գ. Ս. ԳԵՐՑՖԷԼԴ

Մադերան փողոց, № 5.

որ մասնագէտ է կաշու, միզապնակային (է-
րկորակապնակային) և սիֆիլիսի
հիւանդութիւնների

ՎԵՐԱԴԱՆՈՒՄ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ընդունում է հիւանդներին ամեն օր


Առաւօտեան 9—12 ժ.

Երեկոյեան 5—8 ժ.


27—60

Ռաշտի Հայուհեաց Բարեգործական
Ընկերութեան կողմից ձեռնարկուող
համար հարկաւոր է մի մասնագէտ վար-
ժուհի: Պայմանների և մանրամասնու-
թիւնների մասին պիտի դիմել այս հասցէով՝
Քեմտ (Персия) черезъ Баку—Энзели.
Ընկերութեան քարտուղար Յ. Ղազարեա-
նին: 3—5


ԱՄԵՆԱՅԱՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ԶՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻ-
ԹԱՌՆԵՐ, ՖԼԵՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՐՆԵՐ, ՉԱՅ-
ՆԱՄԱՋԵՐ, ԼԱՐՆԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ:



Բոլոր տեսակ գործիքների համար գի-
նը կարելի է վճարել մաս-մաս:
ՊՐԷՏԿԱՆՈՒՄՆԵՐ

ուղարկվում է ձրի:
ԵՐԱՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ՉԱՅՆԱ-
ԽԱՋՆԵՐԻ ԿՈՎԱՍՏԵԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Դ Ե Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կաշիսեական երաժշտական
Ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманяна,
ТИФЛИСЬ.

Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(Հ.) 16—20

Մանկական Պարտեզ-Ուսումնարան և Պանիօն

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ԲԱԳՈՒ

Ընդունվում են երեխաներ և պատրաստվում օրիորդաց և տղայոց գիմնազիայի, բնական
դպրոցի և այլ ուսումնարանների համար:

Մանկական Պարտեզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տ.) Յրերեկան սիստեմով:
Ընդունվում են գիշերօթիկ և կիսագիշերօթիկ երեխաներ:

5—15

СЕКРЕТЪ КРАСОТЫ ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ МЫЛО МОЛОДОСТИ
А.СІУиК? МОСКВА. 20 коп. кув.

M. 109486

ԲԱԳՈՒ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆԻՕՆ

Ա. ԲԱՐԱՆԵԱՆԻ

Ընդունվում են երեխաներ գիշերօթիկ և երթևեկ պատրաստվում են գիմնազիայի բնա-
րական և այլ դպրոցներ մանկու համար: Պայմանների համար դիմել Баку, Старо
Почтовая улица домъ Гаджи Неймата. (Ե. հ. շ.) 6—10

ЖЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ ДЕ РОЗЪЕ 20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСКАЯ ЧАСТЬ
ЖЖЕНЫЙ КОФЕ С.СІУиК?

M. 35941



ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆ

Օժանդիքներ

ԶՐԱՅԻՆ-ՇՈՒՇԱՆ

Սատակ և զուրեկան հոտ.

ՍԱՊՈՆ, ՕՍՆԱՆԼԻԲ ԵՒ ՓՈՇԻ:

M. 87676

КРЕМЪ РАМЪ 1846. 1865. 1882. 1896.
ՀԱՅԹԱՑԹՈՂՆԵՐ ԲԱԶԱՐԱՑՆԵՐԻ ԳՐԱՆ
Ա. ԲԱՆԼԵ և ԸՆԿԵՐԱԿՈՒԹԻՒՆ
ՍՕՍԿՎԱ
ԿՐԷՄ-ԲԱՆԼԵ
Սրտակը 50 և 75 կոպ.: Մախվում է Ռուսա-
տանի յայտնի խանութներում:
В.С.НИКОЛАИ,МОСКВА

M. 89509

ԿԵՐԵՎԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱՄ

Կօդ-կրեմ, յոթունների պոմադ և բրիլյանտին

Ամեն զեպերում գործադրելիս՝ ցոյց են տալիս լրանց գեղեցիկ յատկութիւնը:
Մախվում է ԱՄԵՆՏԵՎ ԵՒ ԲՈՒՆԵՎԱՆԻ յայտնի վաճառականների մօտ:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, և-
րաշխաւորելով, և եղած զեպերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆԻԲԻ ԱՌԱԿԱՆԵՐՆԵՐ

Ա) Կրկնակի խոսքական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հան-
դերձ նաւթային արդիւնաբերական և կերտային գործարանական հաշուառնութեան:

Բ) Առևտրական թուաբանութիւն:

Գ) Առևտրական նամակադրութիւն:


Դ) Գեղագրութիւն և ամենապատ ձեռքերի ուղղել:

Պարապմունքները սկսվելու են 1899 թւի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար
չարունակվելու են իւրաքանչիւր 2ՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին
գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան,
ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Կերպրեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիզկելէի գրա-
վաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում:
Գինն է 3 ռ. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հե-
ղինակին, առանց պատրի ծախս վճարելու:

(9 22) 13—20



ՅԵՆԵՐԵԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱՆ ԲԻՐՈ

Ինժեներ Ն. Բ. Պասսեկի

Тифлисъ, Михайловская ул. № 116.

Հասցին հեռագրիչների համար. Тифлисъ—

Пассеку.

ՏԵԼԵՖՈՆ № 642.



ՆԵՐԱՅԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ

Ռուսաց և արտասահմանեան ֆիր-
մաների:


ԲԻՐՈՆ ՅԱՆՁՆ ԷՍՈՒՆՈՒՄ

կառուցանել

Ամեն տեսակ շինութիւններ, գոր-
ծարաններ և գործարաններ

ԳԱԶԱՇՈՒԹԻՒՆ-ՋՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրոտէխնիկական
կառուցումներ և սարքեր, այսինքն
հեռագրիչների, տէլէֆոնների, լու-
սաւորութեան, տրամվայների և ոյ-
ժի հարողելը հեռաւորութեան վրա:



ԿԱՆԱԼԻԶԱՅԻՍ, ՎԵՆՏԻԼԱՅԻՍ
և ՏԱԳԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ

ամեն տեսակ

տիւրբիններ, խողովակներ, մեքենա-
ներ և ջրաններ:

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ

ԵՐԿԱԹԷ ԿԱՄՈՐՋՆԵՐ

և տնակներ:

ՑԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄ

(Ե. հ. շ.) 29—100